

ՔԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

ՀԱՅԿԵԱՐԹԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր կարգադրութեան առիթով.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Խմբագրութեան կողմից.
Նամակ կարգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԱՆՈՒՍԻՆ
ՈՒՍԻՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատերազմ.

ՆՈՐ ԿԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Կրամի վերաբերութեամբ կառավարութեան արած նոր կարգադրութիւնը առիթ է տալիս մի քանի խօսք ասել այդ մասին: Ինչպէս յայտնի է, մեր հասարակ ժողովուրդը այն կարծիքին է, որ կառավարութիւնը երբեք նիւթական միջոցների կարգադրութիւն չէ կարող ունենալ, որովհետեւ երբ կարիք զգացվեց, խնդիր կը հրաժարի նոր թղթագրամներ պատրաստել և կունենայ իր ցանկացած գումարները: Դա, ի հարկէ, շատ մեծ սխալ է, բայց պէտք խոտովանել, որ եղել են դէպքեր, երբ կառավարութիւնները իրանց թղթ են տուել դուրս գալ որոշ սահմանից և աւելի թղթագրամ են կտրել, քան նրանք իրաւունք ունեին: Թղթագրամի չափազանց շատանալուց, բնականաբար, պէտք է ընկնէր նրա գինը և նա արժէքնար իր նախկին գինի կէսը, քառորդը և երբեմն աւելի ևս պակաս:

Ռուսաստանի Ֆինանսների ներկայ մի-նիստը Վիտաէի օրով և նրա նախաձեռնութեամբ կառավարութիւնը հաստատ որոշեց կարգադրել ուսուց թղթագրամների գործը և միջոցներ ձեռք առնել, որ ուսուց թղթագրամի մէջ չէր զած տարբերութիւնը ոչնչանայ: Նոր ուղեգրամներ սահմանելով և մի քանի ուրիշ կարգադրութիւններ անելով, աշուղկեց թղթագրամին տալ հաստատ և ամուր գինը, որ այլ ևս չէ փոխվում զանազան անտեսական ազդեցութիւններից:

Պէտք է նկատել, որ յիսունական և եօ-

թանանական թուականներում ունեցած պատերազմների պատճառով կառավարութիւնը դուրս էր բերել մեծ քանակութեամբ թղթագրամ, որի համեմատ ոսկի չէր կար գանձարանում: Գանձարանը վերցնելով պետական բանկից թղթագրամը, ստանում էր իբրեւ պարտք ահազին գումարներ, որոնց համար թէեւ նա չէր պէտք է տոկոսներ վճարէր, բայց և այնպէս պարտաւոր էր մաս-մաս նրանց հանգցնել: Այդպիսի պարտքի քանակութիւնը 1879 թվականին հասաւ մէկ միլիարդի: Թղթագրամի գինը ընկաւ 60 կոպեկից ներքեւ: Սպեկուլեացիայի և բօրսական խողերի համար բացվեց մի ընդարձակ ասպարէզ, որից ստատիկ վնասվում էին պետութեան ֆինանսական շահերը:

Մինիստր Վիտաէի ձեռնարկած բարեփոխութիւններից յետոյ վերջերս մնում էր չը հանգցրած յետոյ միլիոն ռուբլի պարտք, որը դեռ կարող էր զանազան թիւրիմացութիւնների առիթ լինել: Վերջին բարձրագոյն ուղեգրով, որ հրատարակվեց նոյն թիւս և որի մասին հաղորդեց «Մշակը», հեռագիրների բաժնում, բարձրվում է և այդ պարտքը: Այդպիսով վերջանում է դրամական գործի բարեփոխութեան էական շրջանը: Այսուհետեւ այլ ևս չէ կարելի թղթագրամ դուրս բերել աւելի քան թղթ է տալիս ոսկու պաշարը և անհնարին է թղթագրամների հետ կրկնել այն վտանգաւոր խողերը, որոնք տասնեակ տարիների ընթացքում ջլատում էին Ռուսաստանի ֆինանսական գործերը:

Թղթագրամը իսկական փող է և գնահատելի արժէք այն ժամանակ, երբ նրա գինը չէ փոխվում և նա ոսկու հաւասար մի չը տատանվող և չը մաշվող մեծութիւն է: Վերջին բարեփոխութիւնների նպատակն է այդ հիմնական պահանջը իրաւորեցնել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

(Ռեկլամանց)

I
Մի ամիս է անցել այն օրից, երբ հարեւապետ Մոնիսը, հեռանալով հայրենի անից, գտնվում է պատերազմող բանակի մէջ: Տիկին Մոնիսը, դէպի իր ամուսինն ունեցած սիրուց զրոյթով, քաջութեամբ տարաւ բաժնանաւ սարսափելի վայրկեանը: Նա միայն մի փոքր գունատվեց, երբ Չարլզը, վերջին անգամ սեղմելով ձեռքը, դողդոջուն ձայնով ասաց.

—Ցանկութիւն... մնա բարով...

Նա վերադարձաւ տուն ֆրիգիւսպէս և հոգեպէս շարժված: Նրան բոլորեցում էին մըտքերը, զգացմունքները, որոնց մասին ինքն իրան հաշիւ չէր կարողանում տալ: Երբեմն նրան թւում էր, թէ Չարլզը չէ էլ մոտենել հեռանալ, այն էլ կրկին ժամանակով: Երբեմն էլ աշխատում էր համոզել իրան, որ նա բոլորովին չէ գնացել: Այդպիսի քայքայներում նա մօտենում էր լուսամուտին, ուշի ուշով նայում անցորդներին և զարմանում, որ չտեսեր այնքան նման են Չարլզին:

—Հաւանական է, որ նա էլ չուտով կը վերադառնայ—լուս չընշում էր նա և հեռանում լուսամուտից:

Կինում էին քայքայներ, երբ նա, կարծես, մօտենում էր, թէ ուր և ինչու համար է գնացել հարեւապետ Մոնիսը: Բայց այդպէս շարունակվում էր միայն մի քանի վայրկեան:

—Տրանսպար... բոլորեց... անցնում էին խնդիր նրա գլխով և իրողութիւնը նոր ոյծով սարսափեցնում էր նրան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հին Հոմեր վճռել էր, որ կարթագէնը պիտի ընտրվի—և կարթագէնը ընտրվեց: Այդ ժամանակից հոմէրական վճիռը «Delenda est Carthago» մտաւ միջազգային լեզուի մէջ իբրեւ քաղաքական արտոյտաբանութիւն: Բայց քաղաքական արտոյտաբանութիւնների մէջ էլ մարդը մարդ է, ուստի և քաղաքական արտոյտաբանը նոյն մարդկային արտոյտաբան է: Թայտնի է, որ արտոյտաբանի վրա շատ զգուշացնող ազդեցութիւն են գործում մանաւանդ չաղ ու համեղ պատանները. և մեր ժամանակի քաղաքագետները շատ և շատ դէպքերում չեն կարողանում թաքցնել, թէ ինչ կտորներն են զրգուտ իրանց արտոյտաբանը: Վերջացող դարում քանի քանի ծրագիրներ են առաջարկվել այս կամ այն սիրած պատանը բաժանելու մասին: Այդ ծրագիրները մէջ արտոյտաբանի զրգուշ պատանների դերեր են կատարել թէ Թիւրքիան, թէ Ֆրանսիան, թէ Բելգիան, թէ Աւստրիան, թէ Իտալիան—մի խօսքով, համարեա ամենքը: Բայց ոչ մի ժամանակ այդ ծրագիրները, որոնք խաղաղ բաժանում էին առաջարկում, չեն գործադրվել և դա—լոյ պատճառով, որ համաձայնողներ, բաժնեկիցներ չեն եղել: Պետութիւնները չեն կամեցել և չեն կարողացել հաւաքվել միասին բաժնիներ տառնալու համար, լաւ իմանալով, որ ուր կայ մարդկային բաժանում, այնտեղ պիտի լինի անպատճառ և առիւծ, որ առիւծի բաժնիներ պիտի վերցնէ իր համար, ինչպէս պատմված է առաջին մէջ: Ահա թէ ինչու այն ծրագիրները, որոնք այս կամ այն կարթագէնը կործանելու և նրա մարմինը կտոր կտոր անելու մանրամասն ցուցմունքներ են և կը մնան լոկ երեւակայութեան պտուղ. իսկ դրանք, իրականութեան մէջ, գործող չարունակում է մնալ ոյծը, որ բաժնիներ է կտրում համեղ կտորներից, կլանում էլ է առանց ընկերակցի մասին մտածելու: Երեւա-

կայութեան մի պտուղ է և և այն քաղաքական ծրագիրը, որ Ամերիկայից մի հայրենասէր գինւոր առաջարկում է «C.-Петербург. Вѣд.» լրագրի մէջ «Delenda est Carthago» վերնագրով մի յօդուածում: Կարթագէնը, որին շատ մեծ հեշտութեամբ բաժան բաժան է անում քաջ հայրենասէր գինւորը, Անգլիան է, կարողանում էք երեւակայել: Այդ կործանումը և բաժանումը զարմանալի հասարակ և պարզ բան է եղել, նրան կարելի է իրագործել հրաշքով, «առաջ և եղեւ»-ի նման:

Ամերիկական ժողովուրդը միայն մի բան է ցանկանում—միայնակ բրիտանական Ամերիկան, որ մեր սահմանակից մի երկիր է, բնակեցրած միատեսակ և հեշտ ձեռքով ազգայնականութեամբ, որը այժմեան հանգամանքների մէջ մեզ միայն մշտական յուզմունքներ են պատճառում: Այս բանին հասնելու և մի և նոյն ժամանակ իրանդիային անկախութիւն տալու համար, մենք պատրաստ ենք մի պայմանագրութիւն ընդունելու, որ կը տար Հնդկաստանը Ռուսաստանին, Աֆրիկայի հիւսիսային մասը Ֆրանսիային, իսկ հարաւայինը Գերմանիային: Օկէանիան էլ կարելի էր բաժանել մեզ բոլորիս մէջ: Այս համաձայնութիւնը և դաշնագիրը, որ ճիշդ կերպով որոշում է չորս պետութիւններից իւրաքանչիւրի ազդեցութեան չըջանը, կը դարձնէին Անգլիան անվտանգ ապագայում և կապահովէին ամբողջ աշխարհի խաղաղութիւնը: Եթէ Գերմանիան անխելայի գտնվէր և հրաժարվէր այս դաշնակցութեան մէջ մտնելուց, Ամերիկան կը միանար Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ: Սպանիան, Հոլանդիան և Դանիան, անկասկած, կը պաշտպանէին դաշնակիցներին և բաժանման ժամանակ պատշաճաւոր վարձատրութիւն կը ստանային: Անգլիան իրական դիմագրութիւն չէ կարող ցոյց տալ: Նա ընդունակ չէ պաշտպանել ոչ Հնդկաստանը, ոչ Եգիպտոսը, ոչ Կանադան: Նրան յարկւում համար հարկ չը կայ, որ պետութիւնները կուր բռնվեն նրա բանակների, ոչ էլ նաւատորմների հետ: Նրա բազմամիլիոն ազգայնականութիւնը կերպարվում է Ամերիկայով, Ֆրանսիայով և Ռուսաստանով, աննշան օգնութիւն ստանալով նաեւ Արգենտինայից, Հնդկաստանից ու Աւստրալիայից: Դադարեցրէք այդ տեղերից պաշար ուղարկելը, և անգլիայիցները պիտի ոչնչանան:

ճեղք» և չառերին նրա՝ դէպի իր կինն ունեցած յարաբերութիւնը թւում էր առն և մինչև անգամ վերաւորական սիրող կնոջ զգացմունքների համար: Բայց տիկին Մոնիսը իր հոգու խորքում զգում էր, որ Չարլզը սիրում է նրան:

II
—Ուր է հայրիկը...

Այս հարցը օրվայ մէջ մի քանի անգամ տալիս էր փոքրիկ Վիլլին: Եւ նրա աչքերի մէջ աչք ժամանակ նկատելի էր լինում այն աստիճան տխրութիւն, որ տիկին Մոնիսը հազիւ հաղ էր կարողանում զգալ իր արտասուքը:

—Հայրիկը գնացել է տատի մօտ, պատասխանում էր մայրը: Բայց երեխան չէր հանգրստանում:

—Ի՞նչու տատը չէ գալիս հայրիկի մօտ.—հարցնում էր նա Փոքրիկ Վիլլին ընտելացել էր, որ իրան պառնկեցնէին քնեղ և հայրիկը և մայրիկը միասին: Նա սովորել էր, որ նրանք քնեց առաջ կարգային նրա հետ աղօթք և համբուրէին նրա ձակատը: Իսկ հայրիկը գիտէր այնպիսի լաւ հեքիաթներ հրեղէն ձեռներով թռչող ապակեանքի, որոնք և երեխային քաղցր երգերով օրորող հրեշտակի և խիտ անտառում մոլորված քրոջ ու եղբոր մասին... Վիլլին շատ խաղաղեցնելու ունի, բայց հիմա նա, համարեա, մոռացել է նրանց... Շատ անգամ, մօրը հետեւելով, նա կանգնում է լուսամուտի մօտ, աթոռի վրա, և ուշի-ուշով նայում անցորդներին: Իսկ երբ վատ եղանակ է լինում, նա տխրութեամբ ասում է.

—Հայրիկը հիմա կը մըտի... Այդ անմեղ երեխայի թոթովանքից տիկին Մոնիսը սիրտը ճմլում է և աչքերը այրվում են արտասուքից: Նա ամեն օր կարգում է լրագիր և երբ նրա մէջ գրված է լինում անգլիայիների յարկութիւնների մասին, նա մտա-

ծում է. «մի և նոյն է, յաղթողներն էլ ունենում են զոհեր»...

Շատ վաղուց, դեռ օրիորդ ժամանակ՝ 14 տարեկան հասակում, նա կարգում էր մի գիրք, որի մէջ նկարագրված էին պատերազմի բոլոր սարսափները: Այն ժամանակ նրան թւում էր, որ հեղինակը այդ բոլորը հնարել է «հեռաքրքրութեան համար»: Խաղաղ ժամանակը զօրքի չարժանները նրան գուարճութիւն էին պատճառում. դրօշակները ծածանվում էին և զինուորները երաժշտութեան ձայնի համեմատ գնում էին աշխոյժ: Բայց երբ նկարագրում են այդ մի և նոյն անհոգ զինուորին պատերազմի դաշտում շարաւրված արիւնի մէջ, շատ կանանց դա թւում է միայն սրտաշարժ հեքիաթ: Տիկին Մոնիսը շատ մեծ հասկացողութիւն ունի պատերազմի և նրա կարեւորութեան մասին. նա եղել էր օրիորդ, հարսնացու, կին, մայր և տանտիրուհի, բայց երբեք չէր եղել հայրենասէր: Քաղաքականութիւնը գտնվում էր նրա անձնական շահերից հեռու և զուցէ պատճառն այն էր, որ նա ամբողջովին նուիրված էր իր ընտանիքին: Դէպի հայրենիքն ու քաղաքականութիւնը ունեցած այդպիսի հայեացքը նա պարտական էր նոյնպէս իր իրթութեանը: Նրա հայրը, որ յայտնի երաժիշտ էր, աւելի քիչ էր մտածում քաղաքականութեան մասին, քան որ և է մէկը: Նա գիտէր, որ Անգլիայում կայ թագուհի, սիրում էր նրան այն պատճառով, որ նա ամբարն «պատու է», բայց նրա մտածմունքները թագուհու մասին այդ հանգամանքից հեռու չէին գնում: Նոյնպէս և քիչ էր հեռաքրքրվում նա մինիստրներով և նրանց գործերով: Երբ մի անգամ Չարլզը վերադառնալով տուն, ասաց նրան, թէ պատերազմ է յայտարարված, նա հարցրեց.

—Պատերազմ:

Եթէ Ամերիկան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը արդիւնէն արտահանութիւնը, բոլոր ուսուցիչները յայտարարեն պատերազմական կոնտրաբանդա, այս մասին յայտնեն Արգենտինային եւ ծով ուղարկեն իրանց նաւերը ոչ թէ նաւատորմների ձեռքով, այլ առետրական նաւերը հայածելու համար, — Հնդկաստանից եւ Աւստրալիայից եկող պաշարեղէնները անյապաղ կը ձերբակալեն, եւ մի քանի ամսից յետոյ Անգլիան հարկադրված պիտի լինի անձնատուր լինել սովի ճնշման տակ, ինչպէս անձնատուր են եղել շատ անմատչելի բերքերը:

Հետո, էման, արագ միջոց: Բրիտանական առիւծը այսքան ողորմելի կենդանի է եղել, այն իսկ առիւծը, որ տարածել է իր իշխանութիւնը ամբողջ երկրագնդի վրա, վայելում է համաշխարհային տիրապետողի փառք ու իրաւունքները, ամենեւին չը վախենալով, որ անթիւ նախանձոտ աչքեր դիտում են իրան: Եւ մենք ամերիկացի զինուորի այս ծրագրի հետ ծանօթացնում ենք մեր ընթերցողներին ոչ թէ այն պատճառով, որ գտնում ենք նրա մէջ ֆանտազիայի առանձին հարստութիւն: Ոչ, դա մեր ժամանակի ցաւալի անխորհրդեղան մի մեծ նմուշն է: Երկրային ժամանակ բրիտանական առիւծը խելոյում է մի բուն ժողովրդի անկախութիւնը. ամբողջ աշխարհի համակրանքը այդ ժողովրդի կողմն է, ամբողջ աշխարհը բրիտանական առիւծի այդ անարգաբարեկամ լիզուկից է, բայց ոչ ոք ժառոր մասին չէ խոսում կորստեան մատնված քաջ եւ առաքինի զոհը ազատելու համար: Ամերիկան պաշտօնապէս չէ ընդունում բռնիքների պատգամաբարութիւնը, նախ իսկ բարեխօսի դեր էլ չէ ուղղում յանձն առնել, բայց այս իսկ միջոցին Բրիտանիան ոչնչացնելու այսպիսի ծրագրերն են հրատարակելու: Կատակերգութիւն է սա, եւ ուրիշ ոչինչ...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք ստացանք Մէլիք-Աղաբեկի «Միւնիք» գործարանի եւ պղնձահանքի կառավարիչ պ. Ա. Մամուլեանի 152 ր., 20 կոպ., որ նուիրել են. 1) Արշակ Մամուլեան 25 ր., Ber-gognon Alexandre 10 ր., Սուլթան Օրբէլեան 10 ր., Մինաս Խոջամբեկեան 10 ր., Նիկոլայ Օրբէլեան 5 ր., Արտեմ Ներսէսեան 5 ր., Գրիգոր Խախանեան 8 ր., Պաւել Մէլիք-Փաշայեան 5 ր., Աթանաս Շերիմեան 8 Եօրիկայ Լիլով 10 կ., Յովհաննէս Մալինեան 5 ր., Իսահակ Բաբանեան 1 ր., Խաչատուր Հայրապետեան 1 ր., Մատուր Գէորգեան 1 ր., Պապանի Աւետիսեան 50 ր., Դուլաս Անարոնեան 1 ր., Լ. Խիբեւոյ 1 ր., Մամաթէոս Յովհաննիսեան 1 ր., Անդրէաս Յովհաննիսեան 1 ր., Սարգիս Յովհաննիսեան 50 կ., Աւագ Աւագեան 1 ր., Անդրէաս Բաբանեան 8

—Այո, սիրելիս, պատերազմ բռնկւելիք է:
—Ինչու համար են ուղում նրանք պատերազմել:

Եւ Չարլզը սկսեց բացատրել նրան, թէ ինչից է առաջացել պատերազմը: Նա բոլորովին ոչինչ չը հասկնայաւ... Նա միայն զգում էր, որ Չարլզը խօսում է չափաւոր ապաւանջ ձանձրանալու, երբեմն չափից դուրս յափշտակվում եւ, կարծես, թէ ինքն էլ չէր հաւատում այն բանին, ինչ որ ուղում էր սպացուցել: Այդ կինը, որի ամուսինը զինուոր էր, բոլորովին օտար էր այն ամենին, ինչ որ վերաբերում էր զինուորական կենսական ծառային: Նրանք տանը պատահում էին զինուորականներ, բայց նա նրանց ծառայութեանը նայում էր այնպէս, ինչպէս ամեն մի սովորական ծառայութեան, չը տալով նրանց գործունէութեան առանձին նշանակութիւն: Ինչ էր պատճառը, որ պատերազմ յայտարարելուց յետոյ Չարլզը բոլորովին դադարեց խօսել նրա մասին: Տիկինը չը գիտէր այդ, բայց նկատում էր, որ նրան պաշարել է մի ինչ որ միտք եւ որ նա երբեմն երկար եւ քնքշալիքով նայում է կնոջն եւ վիշտով եւ յանկարծ Չարլզը առաջ նրան:

—Էմմի, ես չուզում կը դնամ...
Կինը ամբողջովին դողալ այդ խօսքերից: Նրա զգայուն սիրտը իսկոյն հասկացաւ, թէ ուր եւ ինչու է գնում Չարլզը:
—Պատերազմ... հարցրեց նա երկնառնութեամբ:
—Այո:

Եւ նա նորից սկսեց բացատրել, թէ ինչու համար է սկսվել պատերազմը, պատմեց նրան զինուորի պարտականութեան, անգլիացիների յաղթութեան, իր շուտ վերադառնալու եւ ապագայ պարգևների մասին: Կինը լսում էր նրան լուռ, բայց նրա ամեն մի խօսքը անբացատրելի ոյժով մաշում էր խելով սիրտը: Ա-

ր., Գարրիէլ Պետրոսեան 2 ր., Յարութիւն Եփօնյայ Սուրբան 50 կ., Դեռնդ քահանայ Աւագեան 1 ր., Սաւադ Աթապեան 2 ր., 50 կ., Թեւան Աթապեան 3 ր., 50 կ., Մարտիրոս Աթապեան 3 ր., Ոմն 50 կ., Մանաս Ներսէսեան 50 կ., Թէվան Պետրոսեան 50 կ., Բախի Մէլիք-Փաշայեան 50 կ., Մարգարայ Մէլիք-Փաշայեան 1 ր., Յարութիւն Նուրիջեան 50 կ., Սողոմոն Տէր-Նազարէթեան 50 կ., Հայրապետ Մանուկեան 50 կ., Եսայի Խոջամբեկեան 1 ր., Գարրիէլ Մէլիք-Փաշայեան 50 կ., Յարութիւն Յակոբեան 50 կ., Միրզաջան Թումանեան 50 կ., Արէշիկ Սուրբ Արարիսեան 50 կ., Սաթար Իրարիս-Օղլի 30 կ., Չոբար Յարութիւնեան 50 կ., Բէզլար Հայրապետեան 20 կ., Մատթէոս Օրբէլեան 50 կ., Եփրեմ Պետրոսեան 50 կ., Մաշադի-Ջալիլ Մաշադի-Իսմայիլ-Օղլի 30 կ., Փաշա Բադրի-Օղլի 30 կ., Յովսէփ Տէր-Յարութիւնեան եւ Աղաբէգ Բադրեան 60 կ., Շահրիար Պետրոսեան 1 ր., Խոզի Մեղրեմեան 1 ր., Պ. Յակովբեան 10 ր.:

Այս գումարի նուիրատուները 30 րուրի յատկացրել են վենետիկի «Բազմամիւլեզ» ամսագրին, 22 ր. 20 կոպէս—Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին եւ 100 րուրի—«Մշակ» խմբագրութեան, որպէս զի այդ գումարով տան հատ «Մշակ» ուղարկվի զանազան հիմնարկութիւններին: Մենք որոշեցինք ուղարկել «Մշակ» 1) Ախալքալաք (Խարկովի նահանգ) 29-րդ դրագունեան գնդի հայ զինուորներին, 2) Գիշի-նելի զինուորական դպրոցի հայ աշակերտներին, 3) Թաւրիզի Լիւվա թաղի Թամարեան եւ Հակոբեան դպրոցին, 4) Թիֆլիսի Միքայէլեան արհեստանոցային դպրոցի հայ աշակերտներին, 5) Կոզը գնդի դպրոցին, 6) Սուլթանբեկ գնդի (Գեօկչայի դաւառ) հայ հասարակութեան, 7) Թիֆլիսի աղբիւրներից հայ դպրոցի հայ աշակերտներին, 8) Դրեզդենի հայ ուսանողներին 9) Վախան գնդի (Գորու գաւառ) դպրոցին, 10) Ախալքալաքի գաւառի Մեքենիս գնդի համայնքին:

22 ր. 20 կոպէսը միացրինք երկրաշարժից վնասվածների օգտին հաւաքված գումարների հետ, իսկ 30 րուրին ուղարկեցինք «Բազմամիւլեզ» խմբագրութեան:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մայիսի 21-ին
Ներսիսեան դպրոցի նախկին սաների ներկայութեամբ, այսօր, պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարվեց Ներսէս Վ կաթողիկոսի համար, նրա հիմնած դպրոցի 75-ամեայ տարեդարձի առիթով: Կարսի վիճակի յաջորդ եղիջ վարդապետ Մուրադեանը զգացված կերպով խօսեց Ներսէս կաթողիկոսի եռանդուն եւ

մոռնու միտուն ամեն բանում համաձայնում էր նրա հետ, բայց օգտվելով նրա բացակայութիւնից, նա առանձնացաւ, չըզեց ու երկար ժամանակ աղթում ու լաց էր լինում: Ինչից էր, որ Չարլզը նրան սկսեց յիշեցնել հիւանդ մարդու մասին, որին ամեն րօպէ անհամբեր սպասում է անկրկնում իրազեկացած անխուսափելի մահը:

III

Տիկին Մօնիկը այդ ամբողջ ժամանակամիջոցում ստացաւ ամուսնուց միայն երկու նամակ: Նա գրում էր, որ զգում է իրան չափ լաւ, խնդրում էր նրան չը տխրել, ուղարկում էր անթիւ համարներ կնոջն եւ վեկին եւ մինչեւ անգամ հանաք էլ էր անում, խոստանալով վերադարձին իր հետ բերել մի փոքրիկ բռնի, իսկ վերջում աւելացնում էր. «Ես սէր Առնոլտը, լրագրիւնը մի կարգի, նրանց մէջ ոչ մի ուղիղ խօսք չը կայ. հաւատալիք չեմ, որ կը կատարեն ինչիդ բան: Դրանից յետոյ լրագրիւնները մինչեւ անգամ զգուշի էին դարձել: Մի անգամ վիկին հետ դրօշակիւ Լօնդոնի փողոցներում, նա պատահեց իր դպրոցական ընկերուհի տիկին վիկինտոնին վերջինս խոր սգի զգեստի մէջ էր:

—Կրքա, մի ինչ որ անբնական ձայնով գոռաց էմմին:
—Դու, սիրելի էմմի, դեռ ոչինչ չը գիտես... 24-րդ Հենրիս սպանվել է պատերազմում:
Տիկին Մօնիկը բռնեց ձեռքով կուրծքը, թող հառաչանք դուրս թաւ նրա կրծքից եւ նա ցնցվելով սեղմեց տիկին վիկինտոնի ձեռքերը, երկար ժամանակ կանգնել էր նրա առաջ, օրորվում էր ինչպէս արթած:
Ոչ մի խօսք նա չստաց ընկերուհու: Այդ վատ լուրը առաջին ուղիղ լուրն էր, որ հա-

օգտուէտ գործունէութեան մասին ընդհանրապէս եւ մասնաւորապէս կրթութեան գործում արած անդնատելի ծառայութիւնների մասին: Բացատրեց Ներսիսեան դպրոցի 75 տարիների ընթացքում թէ Կովկասում եւ թէ ուրիշ տեղերում հայերի համար կատարած մեծ դերի նշանակութիւնը եւ առանձնապէս չեղանք այդ դպրոցի ընթացաւարտ սաների հայ գրականութեան եւ մանկավարժութեան ասպարէզում մասնաւոր ծառայութիւնները: Սակայն սրտի ցաւով պէտք է ասել, որ հանդիսականների թիւը իրագրութիւնից խոյս տուող մեր հասարակութեանը օր առաջ չէր ծանուցվել այդ մասին:
Հոգեբարձութեան անունով հեռագիր ուղարկվեց հոգեւորական դասի եւ հասարակութեան կողմից:

Վերջին օրերս այստեղ քահանաների եւ հասարակութեան մէջ մեծ իրարանցում էր ներկայութեամբ Պատմաբն Ափրիկեան Մկրտիչ քահանան էր: Աւելորդ չեմ համարում երկու խօսքով ծանօթացնել նրան հասարակութեան հետ: Քահանայական կոչումն ստանալու համար նա փոքր հասակից սովորել է իր հօր խանութում արշին չափել: Երբ հօր գործերը դէպի ձախն են գնում, նա աշխույժացնում է Ալէքսանդրօպօլի գիւղերից մէկի վրա քահանայանալ: Կարծ ժամանակից յետոյ, աւելի չաղ տեղ ձեռք գցելու յոյսով, թողնում է իր հօրը եւ զանազան միջոցներով աշխույժացնում է Սարիզա-միշ աւանը ընկնել, իբրեւ ծխաւէր: Այժմ էլ, զփոշի լինելով Սարիզամիշից, աճապարում է Կարս եւ իր մի քանի համախոհների խորհրդով, օգտվելով Նիլիէ վարդապետ Մուրադեանի բացակայութիւնից, հոգեւոր կառավարութեան մէջ ծերունի Դուկաս քահանայ Արծրունուց զանազան մեղքներով խնդրելով յանուն յաջորդի մի յայտարարութիւն է ստանում, որով Դուկաս քահանան խնդրում է յաջորդից յիշել Ափրիկեանին իրան օգնական նշանակել: Զարմանալով այն է, որ հասարակութեան վրա աւելի ճշուշտ գործ դնելու համար, ժողովրդի մէջ տարածում են, իբր թէ յաջորդի ցանկութեան համաձայն է այդ եւ նրա հաճութեամբ վաղորօք ստացված է այդ մասին: Սակայն ճշմարտութիւնն այն է, որ յաջորդը, Կարս վերադառնալուց յետոյ, տեղականաւոր պաշտոնի, համայնքի ղեկավարութեան վրա մի վաճառականի ճիշդ տեղեկութիւններ քաղել իր առեւտրի գրութեան մասին Ռուսաստանում: Աւալին անգամ լոյս է տեսնելով մի գրքոյի, որի մէջ կը լինեն տեղեկութիւններ կաթնատեսական արդիւնքների առեւտրի մասին:

Մանրեաները մայիս ամսում Կարսի չըլանում անպալաս են, մինչեւ անգամ չափազանց են: Եղանակն զգալի ցուրտ է: Ցանքները լաւ սաւ նրա անհանգիստ պատերազմի բնույթը: Նա չիմացաւ, թէ ինչպէս տուն հասաւ վիկին հետ: Բայց այդ վայրկեանից, երբ նա լսեց հարկաբանութեան վիկինտոնի մահը, հասկացաւ պատերազմի բոլոր սարսափները:

Եւ առաջվայ հեզաբարդ կինը ամբողջովին կատաղեց: Ինչո՞ւ համար է պատերազմը. ի՞նչ իրաւունք ունեն նրանք իսկ ընտանիքից հայրերին, ամուսիններին, ուղարկել ուղիղ դէպի մահ: Եւ միթէ նա կը մնար այստեղ, եթէ մի անգամից ամեն ինչ հասկանար... Այդ առաջին միջնադարները, հանգիստ նստած իրանց տնեւորում, կորագործում են ուրիշի վիճակը, ինչպէս խնդրները կտրում է:

Նրա կատաղած սիրտը աւելի ու աւելի լցվում էր զայրոյթով... Հակառակ ամուսնու կաղնի, տիկինը իրան նուիրեց լրագրիւններին եւ անգլիացիներին ամեն մի յաղթվելու լուրի ժամանակ, անխնայ էր նրանց, որոնք հարկել էին այս պատերազմը: Նրա նրա հետ խօսում էին հայրենիքի սիրտ կամ զինուորի պարտականութեան մասին, նա կատաղութեամբ գոռում էր.

—Բայց ինչու, ինչու արիւն թափել: Ինչու է մեղաւոր նա, իմ անբաղդ Չարլզը եւ այս խեղճ երեխան:

IV

—Տիկին...
Նրա առաջ կանգնած էր նա, որին կոչում են Անգլիայի առաջին միջնադար:
Տիկին Մօնիկը ստուն կերպով, բայց խոնարհութեամբ կոպրից գլուխը:
—Տիկին, թագուհին յանձնել է ինձ յայտնել ձեզ իր երախտագրութիւնը եւ համակրանքը: Տիկին Մօնիկը կրկին խոնարհութեամբ բարեկեց:
—Ձեր ամուսինը հաւատարմութեամբ կատարեց զինուորի եւ քաղաքացու պարտքը:

ապագայ են խոստանում, եթէ ամարային եւ յաջորդի եւ այլ պատահարներից ազատ մնան: Գիւղացիները խրատված անցնելի փորձերից, մասնաւոր անցնել տարվայ ամարային երաշտից, մայիսեան անձրեւներին առանձին նշանակութիւն չեն տալիս: Կարսի չըլանի գիւղական ազգայնականութիւնը մեծ մասամբ տնտեսապէս քայքայված գրութեան մէջ է գտնվում, թէ անցնել տարվայ անբերրութեան եւ թէ այլ պատճառներով: Ուրախալի է, որ պ. նահանգապետն էլ իր այցելութեան ժամանակ համոզվել է դրանում եւ իր սրտին մօտ հոգսերից մէկն է համարում:

Հ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական տօնի պատճառով, «Մշակ» հետեւեալ համարը լոյս կը տեսնի չորսաթիւ մայիսի 27-ին:

Մեզ հաղորդում են, որ ներկայումս ֆրանսիական լեզվով տպագրվում է մի գիրք, որի մէջ համառոտ կերպով նկարագրված են մեր երկրի գիւղատնտեսական արդիւնագործութեան ճիւղերը: Ներկայացնելու Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին: Գիրքը հրատարակվում է երկրագործութեան միջնադարի կովկասեան լիազօրի գիւղատնտես նախաձեռնութեամբ:

Եկող 1901 թ.ին Պետերբուրգում տնայնագործական արդիւնքների համառոտական ցուցահանդէս կազմելու հարցը, ինչպէս լսել է «Русск. Вѣд.» լրագրը, բաւարար լուծումն է ստացել: Այս օրերս երկրագործութեան եւ պետական կառուցման միջնադարի կողմից թոյլտուութիւն ստացվել, թէ այդ ցուցահանդէսը կազմել եւ թէ հրաւիրել տնայնագործական արդիւնքների գործով զբաղվող գործիչներին: Ցուցահանդէսի սկզբնական աշխատանքների համար վճարված է մի յատուկ մասնաժողով կազմել Կայսերական աշխարհագրական ընկերութեան փոխնախագահ պ. Սեմեովին: Նախագահութեամբ:

Յիւնասների միջնադարութեան պաշտօնական օրգանների խմբագրութիւնը ձեռնարկել է հրատարակել մի շարք «առեւտրական տեղեկատու գրքոյիցներ», որոնց նպատակն է հնարաւորութեան տալ ամեն մի վաճառականի ճիշդ տեղեկութիւններ քաղել իր առեւտրի գրութեան մասին Ռուսաստանում: Աւալին անգամ լոյս է տեսնելով մի գրքոյի, որի մէջ կը լինեն տեղեկութիւններ կաթնատեսական արդիւնքների առեւտրի մասին:

Մայիսի 23-ին Թիֆլիսի արքունական թատրոնում սկսվեցին յայտնի դերասանուհի Մ. Սաւայիի մարդիկ պարծանք են այն երկրի համար, որտեղ ծնվել են:
—Նա չուտ կը վերադառնայ... դողողուն ձայնով հարցրեց տիկին Մօնիկը:
—Տիկին... նա... սպանված է:

Տիկին Մօնիկը մինչեւ անգամ չը կարողացաւ գոռալ: Նա չուշաթափվեց, ինչպէս սպասում էր Անգլիայի առաջին միջնադար...
Նա կանգնած էր, ինչպէս յատակին մեկված, գունատված ինչպէս մեռել: Իսկ լայն բացարձակ աչքերի մէջ նկատելի էր անսահման վշտի արտայայտութիւն... Նա ամուր սեղմում էր ձեռքերը եւ նրա բարակ մասերը ճոճում էին:

—Տիկին, արիաքեզ... Թագուհին եւ ես...
Եւ յանկարծ անբաղդ լինով կրծքից դուրս թաւ մի ձայն, որ նման էր եւ ողբի եւ ծիծաղի:
—Թագուհին եւ... դուք... Իսկ ես... ես...
Ի՞նչ պիտի անեմ ես... վիկին, վիկին... գոռաց նա այնպիսի ձայնով, որ առաջին միջնադարի մարդերը բիզ բիզ կանգնեցին:
—Տիկին... կրկին ուղում էր խօսել միջնադար:

—Լեզուք... Դուք... աւազակ էք... Ես թագուհու եւ կանան, որ դուք աւազակ էք...
Նա կրկին անմիտ կերպով ծիծաղեց:
—Չարլզ... վիկին... գոռում էր նա...
Նա, որին անուանում են Անգլիայի առաջին միջնադար, չապաղեց հեռանալ:
Իսկ անբաղդ կինը խելացորտ ուշաթափութեան մէջ սեղմում էր կրծքին իր երեխային:
—Հարկել... մայրիկ... թոթովում էր երեխան եւ նրա կապոյտ աչերից ցուրտ էին մաքուր արցունքներ:

Օր. Մաքրուհի Շամբուրեանց

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.